ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Ճարտարապետ Արշակ Աշոտի Հակոբյանի

«Երևան քաղաքի կանաչ գոտիներում հասարակական տարածքների ճարտարապետահատակագծային խնդիրները» թեմայով

ատենախոսության վերաբերյալ, որ ներկայացված է

ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության

թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ներկայացված հետազոտությունը վերաբերում է Երևան քաղաքի համար խիստ արդիական՝ կանաչ գոտիների և բնական տարածքների պատմաճարտարապետական առանձնահատկությունների վերհանմանը և դրանց արդի ճարտարապետահատակագծային համալիր կազմակերպման հնարավորությունների և ուղղությունների բացահայտմանը: Քննվող թեման հրատապություն ունի ոչ միայն Երևանում, այլև՝ ամբողջ հանրապետությունում, ինչպես նաև հատկապես վերջին տասնամյակներում նմանատիպ ենթակառուցվածքային և քաղաքաշինական ժառանգություն ունեցող երկրներում:

Տվյալ աշխատանքում հեղինակի կողմից մասնագիտական պատշաճ հստակությամբ սահմանված են ուսումնասիրության արդիականությունը, նպատակը, առարկան, հիմնական խնդիրները, մեթոդաբանությունը, թեմայի ուսումնասիրվածությունը, գիտական նորույթը և գիտական աշխատանքին ներկայացվող այլ պահանջները: Հետազոտությունն աչքի է ընկնում թեմային առնչվող հսկայածավալ, այդ թվում՝ արխիվային նյութի խորը ուսումնասիրությամբ և գիտական վերլուծությամբ: Ուսումնասիրվել են Երևան քաղաքի կանաչ գոտիների և բնական տարածքների պատմաճարտարապետական առանձնահատկությունները և տրվել են դրանց արդի ճարտարապետահատակագծային համալիր կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ և առաջնահերթություններ: Հետազոտության կառուցվածքն էլ տրամաբանորեն բխել է թվարկած հարցադրումներից:

Ինչ վերաբերում է հետազոտության բովանդակությանը, հարկ ենք համարում նշել, որ 1.2 բաժնի վերնագրի մեջ «Խորհրդային Երևան քաղաքի կանաչ գոտիները» ձևակերպումը կարելի էր փոխարինել «Երևան քաղաքի կանաչ գոտիների կազմավորումը խորհրդային շրջանում և դրանց ձևափոխումների վերլուծությունը» ձևակերպմամբ, քանի որ բաժնի բովանդակության մեջ կատարված է ավելի վերլուծական աշխատանք, քան արտահայտվում է ներկայացված վերնագրում:

1.3.2.-կետի «ՀՀ օրենքներ, նորմատիվներ և կառավարության որոշումներ կանաչ տարածքների վերաբերյալ» ձևակերպումը կարելի էր տալ նախ ավելի ընդհանրական կերպով, ապա՝ նորից բովանդակությունից ելնելով, կարելի էր ձևակերպել «Կանաչ տարածքներ հասկացության մեկնաբանությունը ՀՀ իրավական ակտերում»:

Կատարվել է Երևան քաղաքի կանաչ տարածքների համալիր ուսումնասիրություն, հիմնվելով հավաքագրած արխիվային և ժամանակակից պաշտոնական փաստաթղթերի, նախագծերի, չափագրությունների, լուսանկարների և այլ նյութերի համեմատության, համակարգման և դասակարգման վրա:

Հեղինակը բավական խորությամբ հետազոտել է Երևան քաղաքի հասարակական կանաչ տարածքների ձևավորումը և ձևափոխումները XIX-XXI դդ.-ում, ժամանակագրորեն առանձնացնելով և առանձին բաժիններով ներկայացնելով Երևանի կանաչ տարածքների ձևափոխումների փուլերը: Այս բաժնում ճարտարապետ Ա.Հակոբյանը Երևանի քաղաքաշինական զարգացման շրջանների բաժանումը փուլերի մեջբերում է ըստ մի շարք տարբեր հեղինակների, սակայն ցանկալի կլիներ հեղինակն իր ուսումնասիրության արդյունքում գիտականորեն հիմնավորեր նշված տարբերակներից, որը պետք է ամրագրվի հետագա մասնագիտական աշխատանքներում:

Հատկապես բարձր գնահատանքի է արժանի աշխատանքի 1.3.3. բաժինը, ուր հեղինակը Երևան քաղաքի կանաչ գոտիների հիմնական տեսակները դասակարգել է ըստ տարբեր չափանիշների, ներկայացրել համապատասխան աղյուսակներ: Դիտարկվել են թվով մոտ մեկ տասնյակ զբոսայգիներ, որոնք բաժանվել են ըստ առանձնահատկությունների՝ հիմնադրում, մակերես, գործառական նշանակություն, այցելուների կազմ և լանդշաֆտի ձևավորում: Սակայն պետք է նշել, որ այստեղ անհարկի է հիմնադրման ժամանակը տալ որպես առանձնահատկություն: Հեղինակը պետք է ուշադրությունն դարձնի նաև աղյուսակ 1.3-ում Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի մասնագիտացված զբոսայգիների գործառական գոտիների մեջ տրված «խաղային հարթակներ և քաղաքներ» ձևակերպմանը, որ թերևս ճշգրտման կարիք ունի:

Ընդհանուր առմամբ, պատշաճ գնահատելով աշխատանքի առաջին գլխի բովանդակությունը, տրված 7 եզրակացությունները կրճատման և հստակ, գիտական ձևակերպման կարիք ունեն:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը ձևակերպված է որպես «Միջազգային փորձի ուսումնասիրություն» կատարվել է կանաչ գոտիների զարգացման և ձևավորման ժամանակագրական ու գործառական վերլուծություն՝ հիմնվելով մի քանի հիմնական գործընթացների վրա, որոնք արտահայտվել են առանձին բաժիններով, որոնք են՝

1. քաղաքային միջավայրում կանաչ տարածքների հանրայնացման սկզբնավորումն ու ընթացքը,
2. հասարակական կանաչ տարածքների ժամանակակից հասկացությունների բացահայտումը և վերլուծությունը,
3. հասարակական կանաչ տարածքների փոխակերպումները քաղաքային արդի միջավայրում,
4. հասարակական կանաչ տարածքների ուսումնասիրումը և գնահատումը,
5. նախագծերի հանրային քննարկումներն ու դրանց մեթոդները,

6. կանաչ գոտիների ձևավորման ժամանակակից միտումները:

Քաղաքների զարգացման ընթացքի ու հեռանկարների համատեքստում քննարկվել են քաղաքային հասարակական կանաչ տարածքների առաջացման պատճառները, դրանց կազմավորման ու գործառնության վրա տարբեր գործոնների ազդեցությունը, այդ հարցերի հետ կապված տեսական մոտեցումների ձևավորումը և դրանց քաղաքաշինական կոնկրետ դրսևորումները: Նույն դիտողությունները տեղին են նաև այս գլխի եզրակացությունների համար, որոնք կրճատման և հստակ գիտական ձևակերպման կարիք ունեն:

Աշխատանքի երրորդ՝ «Երևան քաղաքի հասարակական կանաչ տարածքների հեռանկարային զարգացման ուղղությունները» գլխում հեղինակը կատարված նախորդ ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա քաղաքի տարբեր կառուցապատված գոտիներում սպասարկման մակարդակը բարձրացնելու նպատակով վեր է հանում Երևան քաղաքի կանաչ տարածքների առաջնահերթ ուղղությունների կարգավորման, հնարավոր փոփոխությունների իրականացման անհրաժեշտության հարցերը, քննարկում է դրանց իրականացման հիմնավորվածությունը և հնարավորությունները: Հեղինակի առաջարկն այս տեսակետից հետևյալն է. նախագծման ընթացքում անհրաժեշտ է կիրառել ոչ միայն օրենսդրական, նորմատիվային մոտեցումներ, այլև վերլուծել խնդիրները, հաշվի առնել տարածքի առանձնահատկությունները և օգտագործել դրանց գործնական արդյունքները:

Հասարակական ու կանաչ տարածքներին վերաբերող տեսական ու իրավական մոտեցումները համադրելով՝ հեղինակը բացահայտում է ոչ միայն քաղաքաշինական խնդիրները, այլև առավել լայն համատեքստում դրանց քննարկման և նոր մոտեցումների առաջադրման հնարավորությունները: Երևան քաղաքի բարեկարգված և վերակառուցված տարածքների ձևավորման համար առաջարկվում են կիրառել մի շարք արժեքավոր և հիմնավորված դրույթներ. սահմանել հասարակական կանաչ տարածք հասկացությունը, կազմել հատուկ պահպանվող գոտիների ցանկ, ձևավորել յուրաքարչյուր տարածքին բնորոշ հայեցակարգ, կանոնավորել ու նվազեցնել այդ տարածքներում կառույցների բարձրությունը, կարգավորել հետիոտն և տրասպորտային հոսքերը, կարևորել հետիոտն և հեծանվային ուղիների առկայությունը, ստեղծել կայուն (sustainable) և էներգաարդյունավետ միջավայր, կատարել բույսերի և տնկարկների համապատասխան ընտրություն այդ տարածքների համար, օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրեր և կառավարում, պահպանել այդ տարածքների բնական և պատմամշակութային միջավայրը և այլն:

Հեղինակի ուսումնասիրության թիրախում են գտնվել նաև խնդրո առարկա տարածքների գործառական գոտիավորումը, դրանց առանձին տարրերի և միջավայրի ընկալման ձևավորումը: Մասնավորապես նա անդրադարձել է հետիոտն և տրանսպորտային կապերին, գործառական գոտիավորմանը և դրա առանձին տարրերին: Քննվել և վեր են հանվել զանգվածային միջոցառումների, զվարճանքի, ատրակցիոնների գոտիների, հանգստի և զբոսանքի գոտիների, սպորտային, առողջարանական գոտիների, մանկական գոտիների իրական խնդիրները: Ուշադրության կենտրոնում են եղել նաև այս կանաչ

տարածքների ճարտարապետագեղագիտական ձևավորման, ճարտարապետական տարրերով ձևավորման և կահավորման, լուսավորության հարցերը ևս:

Դիտարկելով կանաչ գոտիների հարմարավետության սահմանումը և ներդրման հնարավորությունները՝ Ա. Հակոբյանն առաջարկում է Երևան քաղաքի կանաչ տարածքների միասնական համակարգի ձևավորում (Հրազդանի կիրճ, Գետառ, գետափնյա հանգստավայրեր և փոխակերպվող տարածքներ): Հայեցակարգի հիմնական դրույթներում արծարծվում են Հրազդան գետի ափամերձ կանաչ տարածքների վերափոխման հնարավորությունները դիտարկելով որպես քաղաքի «կանաչ կենտրոն», իսկ գետամերձ որոշ հատվածներ էլ, որոնք անօգտագործելի են և շինարարության համար ոչ պիտանի, դարձնելով հետիոտնի համար հասանելի: Առաջարկվում է կազմել փուլային իրականացման տարբերակներով մանրամասն հատակագծեր, քաղաքաշինական հանգույցներ և ծրագրեր, որոնք թույլ կտան որոշակի ժամանակում հասնելու որոշակի արդյունքի՝ ոչ միայն ձևավորելով առանձին, այլև իրար մոտ, շարունակական, միմյանց հետ կապված նոր կանաչ տարածքներ: Առաջարկվում է նաև կազմել ամբողջ գետի միասնական և հասանելի ուղիներ. հետիոտնին առավել մոտեցնելու և այդ տարածքներն օգտագործելու նպատակով հասարակական տարածության համակարգերում առաջարկվում է ձևավորել հարակից տարածքների կապեր, փոփոխվող, թեմատիկ, բնապահպանական, ռեկրեացիոն գոտիներ, դիտակետեր, մատչելի հետիոտն ու հեծանվային երթուղիներ:

Բարձր գնահատելով հատկապես երրորդ գլխում կատարված վերլուծական աշխատանքը, այնուամենայնիվ եզրակացություններում առկա են նույն դիտարկումները, ինչ նախորդ գլուխների եզրակացություններում:

Այնուամենայնիվ ճարտարապետ Ա.Հակոբյանն ընդհանուր եզրակացություններում կարողացել է հետազոտության հիմնական խնդիրներին հստակ պատասխաններ ձևակերպել, որոնք ամրագրվել են լիարժեք գիտական հետազոտությամբ:

Հետազոտությունն ուղեկցվում է նաև գրաֆիկական մասով, որի բովանդակությունն ավելի է ընդգծում գիտական պատշաճ մոտեցումն իր կողմից ներկայացվող աշխատանքին, թեև տեքստային մասում դեռևս առկա են սրբագրական և հայերեն եզրույթների կիրառման հարցեր:

Վերևում նշված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության դրական գնահատականը: Ճարտարապետ Արշակ Աշոտի Հակոբյանի «Երևան քաղաքի կանաչ գոտիներում հասարակական տարածքների ճարտարապետահատակագծային խնդիրները» ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, ունի մեծ արդիականություն, գիտական նորույթ, արժեք և հատկապես գործնական ներդրման լայն ոլորտ: Այն համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին և կարող է դիտվել որպես ճարտարապետության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված

մշակում, իսկ հեղինակն արժանի է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՃՏՊՃԺՎՎԳԱ և Պ ամբիոնի վարիչ,
Ճ.թ., պրոֆեսոր Է. Պ. Հարությունյան

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար,
տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ.Հ. Լևոնյան

26.05.2022թ.